

Մ. Ֆրզու մանյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ — ԱՐԳԻՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՆԱԶՈՐ ԳՈՐԾՈՆՆ Է

Միջազգային կոմունիստական շարժումն անցել է երկարատև ու դժվարին, բայց հերոսական ու հաղթական պայքարի ուղի: Չնայած բուրժուական պետությունների անլուր հալածանքներին ու ոստիկանական հետապնդումներին, այդ շարժումն արտահայտելով պրոլետարիատի, աշխատավոր մասսաների արմատական շահերը, միշտ էլ պարզացել է վերընթաց գծով և հասել մեծագույն նվաճումներին:

Դեռ 1913 թվականի՝ «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» նշանավոր հոդվածում Վ. Ի. Լենինը հանրագումարի բերելով կոմունիստական շարժման անցած ուղու արդյունքները, խորը հավատով ու վճռական հաստատակամությամբ գրում է. «Մարքսիզմի երևան գալուց հետո համաշխարհային պատմության երևք մեծ դարաշրջաններից ամեն մեկը նրան նոր հաստատումներ ու նոր հաղթանակներ բերեց: Եւ այդ մարքսիզմին, իբրև պրոլետարիատի ուսմունքի, է՛լ ավելի մեծ հաղթանակ կրերի գալիք պատմական դարաշրջանը»:

Լիովին իրականացան համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդի մարգարեական խոսքերը. այդ վերահաս պատմական ժամանակաշրջանում հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեյոլուցիան և ապա կազմավորվեց սոցիալիզմի հզոր լադերը, որը միջազգային կոմունիստական շարժման մեծագույն նվաճումն է: Հակառակ իմպերիալիստական շրջանների ու նրանց ծախու գրչակների կեղծ հայտարարություններին, թե կոմունիզմը ճգնաժամի մեջ է, միջազգային կոմունիստական շարժումը անշեղորեն աճում ու ամրապնդվում է և զրսևորում իր շարքերի անխախտ միասնությունը: Դրա նոր վառ արտահայտությունը դարձան Հոկտեմբերյան ռեյոլուցիայի 40-ամյակի համաժողովրդական տոնակատարությունը և կոմունիստական ու բանվորական պարտիաների 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդակցությունները, որոնք, ամենայն իրավամբ, նշանավորեցին միջազգային կոմունիստական շարժման զարգացման նոր էտապ: Այդ պատմական խորհրդակցությունները, որտեղ մասնակցում էին ավելի քան 60 երկրների եղբայրական կոմպարտիաների պատվիրակներ, խոշոր ավանդ մըտորբին գիտական սոցիալիզմի ուսմունքի մեջ: Նրանք խորն ընդհանրացման ենթարկեցին կոմունիստական շարժման ձևեր բերած նվաճումները և ընդունեցին երկու կարևորագույն փաստաթղթեր՝ Դեկլարացիան ու Խաղաղության մանիֆեստը, որոնք ունեն ծրագրային նշանակություն ոչ միայն ամբողջ աշխարհի կոմպարտիաների, այլև բոլոր իսկապես առաջադեմ մարդկանց համար:

Կոմունիստական շարժման անխորտակ աճի աղբյուրը նրա ճշմարտացիության ու խորը ժողովրդայնության մեջ է: Այդ շարժման նպատակն է ճնշման

<sup>1</sup> Ի. Ի. Լենին, Սօւ. տ. 18, սթր. 547:

բոլոր ու ասեն տեսակ ձևերի ոչնչացումը, կոմունիստական հասարակության կառուցումը: Ահա թե ինչու կոմունիստական շարժումն արտահայտում է բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների կենսական շահերը, նրանց հույզերն ու ձգտումները, միտքն ու իմաստությունը, խիղճն ու պատիվը: Ահա թե ինչու այդ շարժումը պատմական անհրաժեշտությամբ վերածվում է բոլոր երկրների կոմունիստների ու աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ շարժման, բառիս բուն իմաստով՝ համաժողովրդական շարժման: Ուստի աշխարհում և ոչ մի ուժ չի կարող դիմակայել նրան: Ապագան ամբողջությամբ պատկանում է կոմունիստներին:

\* \* \*

Կոմունիստական ու բանվորական պարտիաների խորհրդակցությունները ՍՄԿՊ XX համագումարի որոշումների դիրքերից վերլուծեցին արդի միջազգային դրությունը և տվին ներկա էտապում դասակարգային ուժերի հարաբերակցության ու նրա հետագա զարգացման պատկերը: Իրերի ունալ դրության շնորհիվ հաշվառման հիման վրա սոցիալիստական երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաների Գեկլարացիայում որոշակիորեն ընդգծվեց, որ մեր դարաշրջանի հիմնական բովանդակությունը անցումն է կապիտալիզմից կոմունիզմին:

Այդ անցումն սկսվեց Հնդկաստանի և Կուբայի օրոք, որով աշխարհի 1/6 մասում հաստատվեց բանվոր-գյուղացիական պետություն և ապա կառուցվեց սոցիալիզմ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ու նրանից հետո իմպերիալիզմի շղթայից պոկվեցին նոր օղակներ և այժմ 13 երկրներ կազմում են սոցիալիզմի համաշխարհային սիստեմը: Սիստեմատիկաբար աճող ու ամրապնդվող սոցիալիզմի լազերին այժմ բաժին է ընկնում Երկրագնդի տերիտորիայի՝ 26 և բնակչության 36%-ը:

Իմպերիալիզմի լազերին լուրջ հարված հասցրեց նաև նրա գաղութային սիստեմի քայքայումը: Այդ պրոցեսն անդադնալիորեն մոտենում է իր ավարտմանը: Բավական է հիշատակել, որ Եթովպիայի և Երկրորդ համաշխարհային պատերազմը գաղութային ու կախյալ վիճակում ապրում էր մարդկության կեսից ավելին, ապա այժմ այդ դրության մեջ մնացել է ընդամենը 160 միլիոն մարդ, բայց նա էլ վճռական պայքար է մղում իր անկախության ու ազատության համար: Ասիան համարյա լիովին թոթափել է գաղութային լուծը: Իմպերիալիզմի շնչումից քայլ առ քայլ ազատագրվում են նաև Աֆրիկայի ժողովուրդները:

Գնալով ավելի և ավելի են նեղանում իմպերիալիզմի շրջանակները: Այժմ աշխարհի ողջ բնակչության մոտ 1 միլիարդը գտնվում է սոցիալիզմի լազերում, 700 միլիոնը կազմում են գաղութային շնչումից ազատագրված ժողովուրդները (չհաշված Չինական Դեմոկրատական Ռեսպուբլիկան, Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկան, Վիետնամի Դեմոկրատական Ռեսպուբլիկան), իսկ բուն իմպերիալիստական երկրներում մնացել է ընդամենը 500 միլիոն բնակչություն: Եթե հաշվի առնենք, որ դրա հետ մեկտեղ իմպերիալիզմի սիստեմը գալարվում է սոցիալական ու այլ հակասությունների մեջ, ապա պատկերը լիովին պարզ կլինի: Այժմ, ավելի քան երբևիցե, կապիտալիզմը դարձել է մեծագույն կապանք մարդկության առաջխաղացման համար, նա կաշկանդում է արտադրողական ուժերի զարգացումը և, Պալմիրո Տոլլատիի զիպուկ արտահայտությամբ, նման է այն անպտուղ ծառին, որը պետք է կտրվի:

ու կրակը նետվի: Իհարկե, զա չի նշանակում, որ պետք է ընկնել բարեհոգության մեջ և թերազնահատել թշնամու ուժերը: Բուրժուազիան՝ ո՛չ, Իմպերիալիզմը՝ դեռ բավականաչափ ուժեղ է և նրա խորտակման համար անհրաժեշտ է ժողովուրդների ուժերի վիթխարի լարում:

Աշխարհի ռևոլյուցիոն վերափոխման կազմակերպիչներն ու ղեկավարները կոմունիստական պարտիաներն են: Նրանք են մարմնավորում միջազգային կոմունիստական շարժումը, գլխավորում աշխատավոր ժողովուրդների պայքարը՝ հանուն սոցիալական ու ազգային ազատության, հանուն դեմոկրատիայի ու խաղաղության: Ահա թե ինչու անընդհատ աճում է կոմունիստների հզոր բանակը և նրա հեղինակությունը: Դեռ 1919 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «Կոմունիստական շարժումը ամբողջ աշխարհում հիանալի աճում է — ավելի դանդաղ, քան կուզենք, բայց լայն, հզոր, խոր և անհաղթահարելի»: Այս տողերը չրվել են մեր երկրի համար խիստ ծանր օրերին, երբ միջազգային Իմպերիալիզմը փորձում էր «բնում խեղդել» նորաստեղծ Սովետական Իշխանությանը, իսկ արտասահմանում դեռ նոր էին ծագում ու կազմավորվում կոմունիստական պարտիաները: Կոմունիստների թիվը աշխարհում հասնում էր ընդամենը 300—400 հազարի: Բայց Լենինը խորապես ճիշտ էր ընկալում իրերի տրամալանությունը և մատնանշում, որ պատմական զարգացումը տանում է դեպի կապիտալիզմի կործանում ու սոցիալիզմի հաղթանակ:

Այդ ռևոլյուցիոն պրոցեսի ողբնշոյն ու առաջամարտիկը կոմունիստական պարտիաներն են: Նրանք միշտ էլ գտնվում են ժողովուրդների կենսական խնդիրների լուծման համար մղվող պայքարի ավանգարդում, ուստի և վայելում են աշխատավոր մասսաների սերն ու համակրանքը և սիստեմատիկարար համարում իրենց շարքերը: Անվանի նկարիչ Պիկասսոյին երբ հարցրին, թե ինչու է մտել կոմունիստական պարտիայի շարքերը, նա աներկբայորեն ասաց. ես գնացել եմ դեպի կոմպարտիան այնպես, ինչպես պապակոզը նետվում է դեպի աղբյուրը: Ժողովրդին նվիրված լավագույն մարդիկ իրենց արժանավոր տեղը համարում են կոմունիստական պարտիայի շարքերը: Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին կոմունիստների թիվը հասավ 4 միլիոն 200 հազարի: Այդ պատերազմը մեծ փորձություն էր ժողովուրդների կյանքում և կոմունիստները վճռական դեր կատարեցին մարդկությանը ֆաշիզմից ազատագրելու գործում: Ահա թե ինչու է՛լ ավելի մեծացավ կոմունիստների հեղինակությունը, այժմ կոմունիստական ու բանվորական պարտիաներ գոյություն ունեն աշխարհի 75 երկրներում:

Միջազգային կոմունիստական շարժման ավանգարդն ու գլխավորող ուժը Սովետական Միության կոմունիստական պարտիան է, որն ունի ավելի քան կեսգարյա պատմություն և կուտակել է մեծահարուստ փորձ: Լենինի ստեղծած ու ղեկավարած կոմունիստական պարտիայի առաջնորդությամբ մեր երկրի ժողովուրդները ռևոլյուցիոն գրոհով թոթափեցին ցարիզմի ու կապիտալիզմի արյունոտ լուծը, ստեղծեցին իրենց բանվոր-գյուղացիական պետությունը, կառուցեցին սոցիալիզմ և այժմ գնում են դեպի կոմունիզմ:

Սակայն սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում ինքնաբավ մեծություն չէ: Լենինը ցույց է տվել, որ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակած երկիրը

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 91:

պետք է կատարի մաքսիմումը սոցիալիզմի համաշխարհային հաղթանակի համար: Այդ տեսակետից մեծ են մեր պարտիայի, սովետական ժողովրդի ծառայությունները միջազգային պրոլետարիատի առաջ: Սոցիալիզմի կառուցումը և ՍՍՌՄ-ի վերածումը աշխարհի հզորագույն տերության ամրապնդեց բոլոր երկրների աշխատավոր մասսաների վստահությունը դեպի սոցիալիզմի հաղթանակը, իսկ դա ավելի ուժեղացրեց պայքարը աշխատանքի ու կապիտալի միջև բուրժուական երկրներում և նոր թափ հաղորդեց գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը: Սովետական Միությունն իր բարոյական աջակցությունն է ցույց տալիս բոլոր ճնշված ժողովուրդներին՝ նրանց ազատագրական պայքարում, օգնության ձեռք է մեկնում ազդեցիկ զոհ դարձած երկրներին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակները ոչ միայն ապահովեցին մեր Հայրենիքի անկախությունը, այլև Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներ ազատագրեցին ֆաշիզմի ստրկացումից: Մարտնչում էին նաև այդ երկրների ժողովուրդները՝ իրենց կոմունիստական ու բանվորական պարտիաների ղեկավարությամբ: Ազատագրվելով օտար նվաճողներից, նրանք տնօրինեցին իրենց բախտն այնպես, ինչպես ցանկացան. այդ երկրներում հաստատվեց ժողովրդա-դեմոկրատական կարգ և այժմ ծավալվում է հաղթական սոցիալիստական շինարարություն: Դրանց մեջ է նաև շինված ժողովուրդը, որի դարավոր պայքարը օտարերկրյա թշնամիների և ներքին հարստահարողների դեմ հաղթական վախճանի հասցրեց մարտերում կոփված Զինական կոմունիստական պարտիան:

Ժողովրդական դեմոկրատիայի երկրների ստեղծումը պետք է դիտել որպես համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի բաղկացուցիչ մասը:

Ըմպերիալիզմի լազերի հետագա փուլման և միջազգային կոմունիստական շարժման անշեղ վերելքի գործում բացառիկ կարևոր նշանակություն ունի սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հզորության ու միասնության մշտական ուժեղացումն ու ամրապնդումը: Այդ պրոցեսն անհաղթահարելի է, սոցիալիստական երկրները և նրանց ժողովուրդները միասնական են իրենց հասարակական-տնտեսական կարգով, մարքսիստական-լենինյան աշխարհայացքով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների կիրառումով: Նրանք բոլորն ունեն միևնույն նպատակը՝ կոմունիստական հասարակության կառուցումը: Մյուս կողմից՝ այդ կառուցման համար առկա են բոլոր պայմաններն ու նախադրյալները—մարդկային ուժը, կազմակերպչական ռեսուրսները, արտագրական-տեխնիկական բազան: Անշուշտ այդ բոլորի մեջ գլխավորն այն է, որ սոցիալիստական երկրների ղեկավարող և ուղղություն տվող ուժը կոմունիստական ու բանվորական պարտիաներն են: Նրանք և նրանց պլանավորած երկրները գտնվում են անխախտ միասնության և եղբայրական համագործակցության մեջ:

Մոսկովյան խորհրդակցությունները նորից հաստատեցին կոմունիստական ու բանվորական պարտիաների հայացքների միասնությունը սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության հիմնական հարցերում: ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմական փորձը վկայում է, որ մարքսիզմ-լենինիզմի սկզբունքները պարտադիր են կապիտալիզմից սոցիալիզմին անցնող բոլոր երկրների համար, որ սոցիալիստական

ունյուցիան և սոցիալիստական շինարարությունն ունեն դրանց բոլորի համար կիրառելի ընդհանուր օրինաչափություններ:

Սյնևլով այդ ընդհանուր սկզբունքներից և դրանց ստեղծագործական կիրառման անհրաժեշտությունից, մարքսիզմ-լենինիզմը պահանջում է անհաշտ ու վճռական պայքար մղել մի կողմից՝ «նեիդիտնիզմի, իսկ մյուս կողմից՝ դոգմատիզմի դեմ: Այդ նշանակում է, ո՛չ ժխտել ընդհանուր օրինաչափությունները և ո՛չ էլ մեխանիկորեն պատճենավորել միմյանց, թե՛ մեկը թե՛ մյուսը վնասակար են սոցիալիզմի գործի համար: Խհարկե, ժամանակակից պայմաններում գլխավոր վտանգը «նեիդիտնիզմն է, աչ օպորտունիզմը, որը նենգափոխում է մարքսիզմը, քարոզում այսպես կոչված «լիբերալ կոմունիզմ», բայց իրականում գովերգում կապիտալիզմը: Հենց այդպես էր վարվում մերկացված նաղ-Լոշոնցիի նացիոնալիստական խմբավորումը, որը «սոցիալիզմի հունգարական ուղու» անվան տակ փորձում էր անցկացնել կապիտալիզմի ռեստավրացիայի գիծ: Մոլի «նեիդիտնիստի և ամերիկյան իմպերիալիզմի կամակատարի դերում հանդես եկավ նաև Ջիլասը:

Կյանքը ցույց է տալիս, որ իմպերիալիզմի իդեոլոգների և նրանց զինակից — «նեիդիտնիստների» քարոզած այսպես կոչված «ազգային սոցիալիզմի» տիրահաղթական թևերի սոսկ բուրժուական նացիոնալիզմի նրբացրած տեսակն է, որը նպատակ ունի «բաժանիր, որ տիրես» ջարդարարական լողունգով կազմավորել միջազգային բանվորական շարժումը և ամենից առաջ սոցիալիզմի լագերը: Ահա թե ինչու կոմունիստական պարտիաները վճռական ու անհաշտ պայքար են մղում «նեիդիտնիզմի դեմ և միաժամանակ դատապարտում դոգմատիզմն ու աղանդավորությունը:

Իմպերիալիստական պետությունները ԱՄՆ-ի գլխավորությամբ կանգ չեն առնում ոչ մի բանի առաջ, որպեսզի չլատեն սոցիալիզմի լագերը: Ամերիկյան բուրժուազիայի պնակալեզ Ս. Ուլցերբերգերը «Մեծ ձնհալ» իր պատկվիլում պահանջում է կազմավորել սոցիալիզմի համաշխարհային սիստեմը: Այդ դեռ բավական չէ, նիզակ են ճոճում բուրժուական աշխարհի կառավարողներն ու ռազմական գործիչները: Բայց, ինչպես երևում է, նրանք չեն ուզում հասկանալ, որ շատ են փոխվել ժամանակները և ավանտյուրաներով չի կարելի հաջողության հասնել:

Սոցիալիզմի լագերը, որին գլխավորում է Սովետական Միությունը, աճում ու ամրապնդվում է: Այժմ նրա արդյունաբերական արտադրանքը կազմում է աշխարհի արդյունաբերական արտադրանքի 1/3-ը: Երկրի սովետական արբանյակների արձակումը ցույց տվեց, որ գիտության ու տեխնիկայի վճռական ճյուղերում սոցիալիստական սիստեմը ունի որոշակի առաջնություն և այստեղ անգամ ամենազարգացած կապիտալիստական երկիրը՝ ԱՄՆ-ը ստիպված է ՄԱՌՄ-ին հասնելու կուրս վերցնել: Բայց հանրահայտ ճամարտություն է, որ խաղաղ մրցության մեջ էլ հաղթանակը սոցիալիզմինն է: Արդեն այժմ ակնառու է այն փաստը, որ արդի միջազգային դրությունը թևակոխում է մի այնպիսի բեկման մոմենտ, երբ սոցիալիզմի ուժերը գերազանցում են կապիտալիզմից ոչ միայն աշխարհի բնակչության վրա ունեցած ազդեցությամբ, այլև տնտեսության, գիտության ու տեխնիկայի խոշոր նվաճումներով: Պատկերավոր է ասել չին մեծ ժողովրդի առաջնորդ Մաո-Յզե-դունը, որ «այժմ ոչ թե Արևմուտքից եկող քամին է ճնշում Արևելքից եկող քամուն, այլ Արևելքից եկող քամին Արևմուտքից եկող քամուն»:

\* \* \*

Միջազգային կոմունիստական շարժման հաջողությունները մեծ են կապիտալիստական աշխարհում: Չնայած անլուր դժվարություններին ու ոստիկանական հալածանքներին, այժմ երկրագնդի բոլոր կոնտինենտներում գործում են կոմունիստական ու բանվորական պարտիաներ: Ընդհանուր առմամբ կապիտալիստական, գաղութային ու կախյալ երկրներում այդ պարտիաների թիվը հասնում է 62-ի, ընդ որում դրանցից 33-ը շարունակում են գտնվել ընդհատակում (Իսպանիա, Թուրքիա, Հունաստան, Իրան, Պորտուգալիա, Պակիստան, Կոլումբիա և այլ երկրներում):

Կապիտալի երկրներում գործող կոմունիստական պարտիաների խնդիրն է՝ խստորեն հաշվի առնել միջազգային արենայում տեղի ունեցած արմատական փոփոխությունները հօգուտ սոցիալիզմի, ճշտորեն զուգակցել սոցիալիստական ռևոլյուցիայի ընդհանուր օրինաչափություններն ու տարբեր երկրների ազգային առանձնահատկությունները, ստեղծագործորեն կիրառել սոցիալիզմի լազերի պատմական փորձը, մշակել պայքարի մարքսիստական ծրագիր և ստրատեգիական ու տակտիկական ճիշտ գիծ, տիրապետել աշխատանքի, կազմակերպության ու պայքարի բոլոր հնարավոր ձևերին (խաղաղ և ոչ խաղաղ, պառլամենտական ու ոչ պառլամենտական և այլն), մեծամասնություն շահել ժողովրդական մասսաների մեջ և նրանց տանել դեպի սոցիալական ու ազգային ազատագրություն:

Ետպատերազմյան տարիներին կապիտալիստական մի շարք երկրներում կոմունիստական պարտիաները դուրս եկան անլեզալ վիճակից, դարձան ավելի մասսայական և ուժեղացրին իրենց քաղաքական կազմակերպական աշխատանքը: Ավելին, 12 երկրներում (Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Դանիա, Ավստրիա, Ֆինլանդիա, Չիլի և այլն) կոմունիստները միառժամանակ մտան կառավարությունների մեջ և հետևողականորեն պահպանեցին իրենց պրոլետարական անադարտությունը: Հատկապես պետք է նշել Արևմտյան Եվրոպայի ամենախոշոր՝ Ֆրանսիական ու Իտալական կոմպարտիաների եռանդուն գործունեությունը և հարաճող հեղինակությունը:

Ֆրանսիայի կոմունիստական պարտիան երկրի խոշորագույն քաղաքական պարտիան է: Նա սերտորեն, խոր արմատներով կապված է Ֆրանսիական պրոլետարիատի, աշխատավոր գյուղացիության ու առաջավոր ինտելիգենցիայի հետ: Այդ պարտիան ոչինչ չի խնայում Ֆրանսիական ժողովրդի սոցիալական ու ազգային շահերը պաշտպանելու համար: Բավական է հիշատակել, որ հիտլերյան օկուպացիայի դեմ մղվող դժվարին պայքարում զոհվեցին 75 հազար Ֆրանսիական կոմունիստներ, այդ թվում նաև հայ ժողովրդի արժանավոր զավակ Միսաք Մանուշյանը:

Ֆրանսիական ժողովուրդը իր սերն ու վստահությունն է արտահայտում կոմունիստական պարտիայի նկատմամբ: 1956 թ. հունվարի 2-ին պառլամենտական ընտրություններում կոմունիստները շահեցին 151 ղեկավարական տեղ և Ազգային ժողովում կազմում են ամենամեծ քաղաքական ֆրակցիան:

Ֆրանսիական կոմպարտիան խոշոր դեր կատարեց երկրում նոր, համեմատաբար դոմոկրատական կոնստիտուցիա ընդունելու համար: Նրա անմիջական աջակցությամբ պառլամենտը որոշումներ ընդունեց ծերերին օգնելու ազգային ֆոնդ ստեղծելու և արձակուրդները վարձատրելու մասին: Ֆրանսիական կոմ-

պարտիան վճռականորեն դատապարտում է ՆԱՏՕ-ն, նրա ադրեսիվ քաղաքականությունը և պահանջում խաղաղ ճանապարհով արդարացի լուծում տալ Ալժիրի հարցին: Երկրում օրեցօր աճում է ժողովրդական շարժումը՝ ձախ կառավարություն կազմելու համար: Կոմպարտիայի 14-րդ համագումարը (1956 թ. հուլիս) միջոցառումներ մշակեց բանվոր դասակարգի պառակտումը լիկվիդացնելու համար, բայց ֆրանսիական սոցիալիստները գերադասում են գործարքի մեջ մտնել երկրի ռեակցիոն ուժերի հետ և համատեղ հալածանքներ մղել կոմունիստների դեմ, ընդհուպ մինչև առաջարկ մտցնելը՝ Կոմպարտիան արձակելու մասին: Իսկ երկրի ֆաշիզացման մի փորձ էր, որը սակայն վճռական հակահարված ստացավ կոմունիստների և ժողովրդական մասսաների կողմից: Մերկացնելով այդ արգահատելի ոտնձգությունը երկրի դեմոկրատական նորմաների նկատմամբ, «Յոճանիտե» թերթը գրել է. «Այդպիսի նախագծերը լուրջ սպառնալիք են ոչ միայն կոմունիստների, այլև բոլոր դեմոկրատների համար: Ուստի կոմունիստները հաստատակամորեն կոչ են անում ստեղծելու գործողությունների միասնություն բոլոր աշխատավորների և դեմոկրատների միջև: Ինչքան սոցիալիստական ղեկավարներն ավելի հեռու են դնում կործանման ուղիով, այնքան ավելի անհրաժեշտ է դառնում միասնական ճակատը՝ կոմունիստների և շարքային սոցիալիստների միջև»:

Ֆրանսիական Կոմպարտիան վճռականորեն հանդես է գալիս սովետաֆրանսիական բարեկամության ամրապնդման, բոլոր երկրների աշխատավորների համերաշխության նշանաբանով: 1957 թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ Ֆրանսիայի Կոմպարտիայի Կենտկոմի պլենումը, որը միահամուռ կերպով հավանություն տվեց կոմունիստական ու բանվորական պարտիաների Գեկլարացիային ու Խաղաղության մանիֆեստին: Մորիս Թորբզը իր ելույթում ընդգծեց այդ փաստաթղթերի կարևորագույն նշանակությունը բոլոր երկրների կոմունիստների համար և վերջում ասաց. «Պահպանելով մարքսիստական-լենինյան թեորիան ամեն մի ոտնձգությունից, մենք ամրապնդում ենք և ընդլայնում մեր պարտիան: Մենք համախմբում ենք բանվոր դասակարգի և բոլոր դեմոկրատական ուժերի շարքերը: Մենք արագացնում ենք սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում»<sup>1</sup>:

Միջազգային կոմունիստական շարժման առաջավոր ջոկատներից մեկն է Իտալիայի Կոմպարտիան, որի շարքերում համախմբված են 1 միլիոն 800 հազար մարդ, ընդ որում 90 հազար հոգի մտել են միայն վերջին տարում: Այդ պարտիան անցել է պայքարի փառապանծ ուղի և հասել խոշոր հաջողությունների: Նա միակ պարտիան է Իտալիայում, որը հետևողականորեն պաշտպանում է բանվորների ու ողջ աշխատավորության արմատական շահերը և վճռական պայքար մղում մոնոպոլիստական կապիտալի դեմ, պահանջում խստորեն կիրառել ուսուցիչական կոնստիտուցիան, անցկացնել ագրարային ռեֆորմ, ապահովել դեմոկրատական ազատությունները մասսաների համար և այլն: Կոմունիստները մերկացնում են ՆԱՏՕ-ի կործանարար քաղաքականությունը իտալական ժողովրդի ազգային շահերի համար:

Այդ բոլորի հետևանքով անընդհատ աճում ու ամրապնդվում է իտալական Կոմպարտիայի հեղինակությունը: 1953 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ Կոմպարտիայի օգտին ձայն տվին 6122600 հոգի և կո-

<sup>1</sup> «Պրավդա», № 341, 1957 թ. դեկտեմբերի 7:

մունխատ-դեպուտատները ընտրվեցին 143 մարդ: Վերջին լրացուցիչ մունիցիպալ ընտրությունների ժամանակ կոմունիստները նախկինից ավելի շատ ձայն ստացան: Կոմպարտիայի ղեկավարության տակ է գործում կոմունիստական երիտասարդության իտալական Ֆեդերացիան:

Իտալիայի պրոլետարիատի միասնության պահպանման ու ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեն կոմունիստական ու սոցիալիստական պարտիաների համագործակցությունը, որը հաջողությամբ իրականացվում էր սկսած 1934 թ. Բայց վերջին շրջանում սոցիալիստական պարտիայի ղեկավարությունը՝ Պլետրո Նեննիի գլխավորությամբ ոտնահարեց այդ տակտիկական համաձայնությունը, գործարքի մեջ մտավ սոցիալ-դեմոկրատների հետ և նույնիսկ հարձակումներ գործեց կոմունիստական շարժման վրա, Սովետական Միության վրա: Դրանով Իտալիայի Սոցիալիստական պարտիան ավելի վարկարեկեց իրեն, իսկ Կոմունիստական պարտիան շարունակեց խորացնել իր աշխատանքը մասսաների մեջ, այդ թվում նաև շարքային սոցիալիստների մեջ:

Իտալական Կոմպարտիան հանդես է դալիս պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից և պաշտպանում սոցիալիզմի լազերն ու միջազգային կոմունիստական շարժումը, բոլոր երկրների ժողովուրդների ազատասիրական պայքարը: 1957 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ իտալական Կոմպարտիայի ԿԿ-ի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը, որը լիովին հավանություն տվեց կոմունիստական ու բանվորական պարտիաների մոսկովյան խորհրդակցությունների արդյունքներին: Իր գեկուցման մեջ Պալմիրո Տոլյատին ասաց. «Սոցիալիզմը հաղթանակ է տարել կապիտալիզմի նկատմամբ և շարունակում է առաջ շարժվել, խաղաղությունը սպառնալիքի տակ է, բայց այն կարելի է պաշտպանել: Կոմունիստական շարժումը այժմ քան երբևիցե ամբողջ աշխարհին ներկայանում է միասնական՝ թե՛ գաղափարական տեսակետից, և թե՛ պրակտիկ գործողությունների ասպարեզում: Նա պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով ուժեղացրել է իր համախմբվածությունը, ձեռք է բերել նոր հավատ, նոր վստահություն վերջնական հաղթանակի համար: Այդ վստահությունը սնում և երաշխավորում են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումները, սոցիալիստական շինարարության 40 տարվա հաջողությունները, Զինաստանի և ուրիշ երկրների տարած հաղթանակները: Հանուն սոցիալիզմի հաղթանակի մենք կզնանք առաջ մեր աշխատանքում, և մեզ սպասում են նոր հաղթանակներ»<sup>1</sup>:

Ռևոլյուցիոն պայքարի պանծալի էջեր ունի Անգլիայի բանվոր դասակարգն ու նրա Կոմունիստական պարտիան: 1957 թ. ապրիլին տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայի Կոմպարտիայի 25-րդ համագումարը, որն անցավ պարտիայի գաղափարական ու կազմակերպական միասնության ամրապնդման դրոշի տակ: Համագումարը վճռականորեն մերժեց ու դատապարտեց պարտիան դիսկուսիոն ակումբի վերածելու օպորտունիստական փորձերը, մերկացրեց աջ լեյբորիստների կեղծ քարոզները այսպես կոչված «ժողովրդական կապիտալիզմի» մասին, խարադանեց անգլիական կառավարության ագրեսիվ քաղաքականությունը և ստորահաճությունն ամերիկյան իմպերիալիզմի առաջ:

Անգլիայի Կոմպարտիան իրեն խնդիր է դնում հասարակության ռևոլյուցիոն վերափոխումը, ընդ որում պարտիայի ծրագրում («Բրիտանիայի ուղին

<sup>1</sup> «Պրավդա», № 340, 1957 թ. դեկտեմբերի 15:

ղեկի սոցիալիզմը» մատնանշվում է, որ «Անգլիայում անցումը դեպի սոցիալիզմը կարող է տեղի ունենալ պառլամենտի վերակազմման և ժողովրդական լայն միության ստեղծման ուղիով»: Իհարկե, դա ոչ մի կապ չունի ռեֆորմիզմի հետ, որովհետև պահանջվում է քաղաքական իշխանության անցումը բուրժուազիայից բանվոր դասակարգին:

Ոստիկանական տեղորի պայմաններում է գործում Արևմտյան Գերմանիայի Կոմունիստական պարտիան, որն օրենքով արգելվել է Արևմտա-գերմանական կառավարության կողմից: Բայց դա չի ահաբեկում կոմունիստներին: Նրանք շարունակում են իրենց գործունեությունը, մերկացնում Ադենաուերի աղակերթն, ժողովրդասպան քաղաքականությունը և պայքարում հանուն Գերմանիայի խաղաղ ու դեմոկրատական միավորման, հանուն գերմանական ժողովրդի ապստոլության: Մեծ ուժով են հնչում Գերմանիայի Կոմպարտիսի՝ աշխատավորներին ուղղած նախընտրական փաստաթղթերից մեկի խոսքերը. «Զննյաժ հալածանքներին, մենք՝ կոմունիստներս պայքարում ենք մեր ժողովրդի ազատության և մեր հայրենիքի միասնության համար: Հիտլերի ժամանակ հազարավոր մեր լավագույն մարդիկ զնացին դեպի մահ, որպեսզի հետ պահեն Գերմանիան աղետից և մեր ժողովուրդը փրկեն նրանցից, ովքեր մեր Հայրենիքը դատապարտել էին կոլոնիալիզմին: Մենք՝ կոմունիստներս հավատարմորեն ծառայում ենք գերմանական բանվոր դասակարգի և գերմանական ժողովրդի գործին: Կոմունիստներս դուր կարող ենք հավատարմ Ձեր վստահությունը պարտականություն է դնում կոմունիստների վրա: Այսօր մեր պարտիան արգելված է և ենթարկվում է հետապնդումների, բայց վաղը մենք ավելի ուժեղ կլինենք, քան երբևիցե, և մենք կանգնած ենք դիմադրության բարձր այն մարտիկների առաջին շարքերում, որոնք պայքարում են խաղաղության, պրոգրեսի և լավագույն ապագայի համար»:

Անդուլ կերպով բազմապատկում են իրենց ուժերը և ակտիվացնում ռևոլյուցիոն աշխատանքը Ավստրիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Դանիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Իսպանիայի, Հունաստանի և այլ երկրների կոմպարտիստները:

Ետպատերազմյան ժամանակաշրջանում կոմունիստական շարժումը վերելք ապրեց Ասիայի, Ամերիկայի ու Աֆրիկայի բազմաթիվ երկրներում:

Հնդկաստանի Կոմունիստական պարտիան թեև համեմատաբար երիտասարդ է (հիմնվել է 1933 թ.), բայց առաջ է շարժվում մեծ քայլերով: Ստեղծվելուց հետո համարյա անմիջապես, այդ պարտիան հայտարարվում է օրենքից դուրս և լեզալ գործունեության հնարավորություն է ստանում միայն 1943 թ. Պարտիայի 2-րդ համագումարը (1948) խնդիր է դնում երկրում ստեղծել լայն դեմոկրատական ճակատ, որի նպատակը պետք է լինի ապահովել Հնդկաստանի լիակատար սուվերենությունը (հատկապես նրա առանձնացումը Բրիտանական կայսրությունից) և ստեղծել դեմոկրատական կառավարություն, անցկացնել բանկերի, խոշոր արդյունաբերության և օտարերկրյա ձեռնարկությունների ազգայնացում, վերացնել կալվածատիրական հողատիրությունը, սահմանել բանվորական վերահսկողություն ձեռնարկությունների վրա, 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի միեմում և այլն:

Այդ պահանջները և դրանց կենսագործման համար մղվող ակտիվ պայքարը լայն ժողովրդականություն ստեղծեցին Հնդկաստանի Կոմպարտիայի շուրջը և այժմ նա վայելում է մեծ հեղինակություն: 1957 թ. ընտրություն-

ներում Կոմպարտիան 2 անգամ ավելի ձայն ստացավ, քան նախորդ ընտրություններում (1953), ընդ որում 29 տեղ շահեց պառլամենտի ժողովրդական պալատում և 207 տեղ նահանգների օրենսդրական օրգաններում: Բնորոշ է, որ 15 միլիոն բնակչություն ունեցող Քերալի նահանգում կոմունիստները մեծամասնություն ստացան օրենսդրական ժողովում և կազմվեց նահանգի կառավարություն՝ Կոմունիստական պարտիայի Քաղբյուրոյի անդամ Նամբոդրիպաղի գլխավորությամբ: Այդ կառավարությունն արդեն որոշում է ընդունել քաղաքական բանտարկյալների ազատման մասին, ինչպես նաև միջոցներ է ձեռք առնում հողի վարձակալության հարցի կանոնավորման, օտարերկրյա պլան-ուացիաները նացիոնալիզացիայի ենթարկելու համար և այլն:

Հնդկաստանի Կոմպարտիայի գլխավոր քարտուղար Աջոյ Գիսոշը Հսկտեմբերյան սեույուցիայի 40-ամյակի առթիվ արտասանած իր ճառում ասաց. «Ինչպես ցույց տվին վերջին ընդհանուր ընտրությունները, Հնդկաստանի Կոմունիստական պարտիան դարձել է նշանակալից ուժ երկրի քաղաքական կյանքում և ավելի հաջողությամբ կկատարի իր դերը այն պայքարում, որ մղվում է հանուն ազգային ազատության ու խաղաղության ամրապնդման, հասուն հնդկա-սովետական բարեկամության և սրբուխարական ինտերնացիոնալիզմի կապերի ամրապնդման, հանուն մարքսիզմ-լենինիզմի հաղթանակի»<sup>1</sup>:

Կապիտալիստական աշխարհի խոշորագույն կոմունիստական պարտիաներից է Ինդոնեզիայի Կոմպարտիան, որը թեև ենթարկվել է բազմաթիվ հալածանքների ու հետապնդումների, բայց այսօր իր շարքերում համախմբում է 1½ միլիոն մարդ: Այդ պարտիան իր արժանի լուծման է մտցրել երկրի ազգային ազատության ու անկախության համար մղվող պայքարում: Օտարերկրյա և հատկապես հոլանդական իմպերիալիստների ու նրանց ինդոնեզական դորժակիցների վայրագություններն ու դադանությունները շկոտրեցին ու չէին կարող բնկծել կոմունիստների անձնվեր հաստատակամությունը: Դիշտ է շատերը զոհվեցին, այդ թվում նաև Կոմպարտիայի Կենս.կոմի գլխավոր քարտուղար Մանովար Մուսսոն և Քաղբյուրոյի անդամ Ամիր Շարիֆուդդին, բայց ինդոնեզական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը հաղթանակով պսակվեց:

Կոմպարտիայի 5-րդ Ազգային համագումարը (1954) դիտական վերլուծման ենթարկեց ինդոնեզական սեույուցիայի կարևորագույն հարցերը և խոշոր դեր կատարեց միասնական ազգային ճակատի դորժունեության հետագա ակտիվացման ասպարեկում: Այդ ճակատի մեջ են մտնում բանվորները, գյուղացիները, մանր բուրժուազիան և ազգային բուրժուազիան: Համագումարում ընդունված պարտիայի ծրագրում հատկապես ընդգծվում է բանվոր դասակարգի կազմակերպող դերը և բանվորա-գյուղացիական զաշինքի ստեղծման ու ամրապնդման անհրաժեշտությունը: Միայն այդ ձևով կարելի է հասնել ոչ միայն ազգային, այլև սոցիալական լիակատար ազատության:

Ինդոնեզիայի Կոմպարտիան պաշտպանում է պրեզիդենտ Սուկառնոյի երկրի քաղաքական կյանքի կայունացման և ազգային միասնության ամրապնդման ծրագիրը: Այժմ հատկապես պայքար է մղվում Արևմտյան Իրիանան Ինդոնեզիայի հետ միացնելու և հոլանդական դադուբային տիրապետության մնացորդները լիկվիդացնելու համար:

<sup>1</sup> «Պրավդա», № 313, 1957 թ. նոյեմբերի 9:

Ինդոնեզիայի Կոմպարտիայի ժողովրդական քաղաքականությունը ապահովում է աշխատավոր մասսաների աջակցությունն ու վստահությունը նրանկատմամբ: Այժմ պարտիան անմիջականորեն ղեկավարում է բանվորական, գյուղացիական, կանանց, երիտասարդական կազմակերպությունները, որոնք միավորում են մոտ 5 միլիոն մարդ: 1955 թ. պառլամենտական ընտրություններում Կոմպարտիան ստացավ ավելի քան 6 միլիոն ձայն և շահեց 39 դեպուտատական տեղ: Մունիցիպալ ընտրությունների ժամանակ կոմունիստները մեծամասնություն ստացան Ջոկյակարտա ու Սեմարան քաղաքներում և նրանց ներկայացուցիչները մտան քաղաքային ինքնավարության մեջ:

Ինդոնեզիայի Կոմպարտիայի Կենտկոմի գլխավոր քարտուղար Գ. Ն. Այդիթը խոսելով պարտիայի հետագա անելիքների մասին, նշել է. «Հավատարիմ իր հերոսական հայրենասիրական տրադիցիաներին, դասեր վերցնելով իր փորձից, որ ձեռք է բերվել Ինդոնեզիայի լավագույն զավակների կյանքի պնով, իր գործունեության մեջ ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական թեորիայով, Ինդոնեզիայի Կոմունիստական պարտիան շարունակում է պայքարը իր պատմական խնդրի իրականացման համար: Ներկա պայմաններում ինդոնեզական Կոմպարտիան առաջիկայում ևս անխոնջ կերպով և ամբողջ եռանդով կգործի միացյալ ազգային ֆրոնտի ընդարձակման ու ամրապնդման համար: Դրա հետ միասին նա կշարունակի անդուլ աշխատանք տանել պարտիայի ամրապնդման և նրա շարքերի բոլշևիկացման ուղղությամբ, մի բան, որ հանդիսանում է միացյալ ազգային ֆրոնտի անսասանության և հաջող գործունեության հիմնական երաշխիքը»:

Որոշակիորեն աշխուժացել է Նապոնիայի Կոմունիստական պարտիայի աշխատանքը: Նա իր ստեղծման օրից (1922) մինչև 1945 թ. եղել է ընդհատակում, բայց միշտ էլ պաշտպանել է բանվորների ու գյուղացիների շահերը, պայքարել նրանց ազատագրման համար: Այժմ այդ պարտիայի մերձավորագույն խնդիրն է լայն դեմոկրատական ազգային-ազատագրական ֆրոնտի միջոցով վերացնել ամերիկյան-օկուպացիոն ուժերը, կայսերական իշխանությունը և ստեղծել դեմոկրատական ռեսպուբլիկա, ազգայնացնել կալվածատիրական հողերը, սահմանել 8-ժամյա բանվորական օր, ամրապնդել ճապոնական ժողովրդի և սոցիալիզմի լազերի ու բոլոր ազատասեր ժողովուրդների ինտերնացիոնալ կապերը:

Բնորոշ է, որ կոմունիստական պարտիայի հեղինակության աճման շնորհիվ, 35 տարուց հետո նրա ղեկնապետության առաջին անգամ հաջողվեց ժամանել Մոսկվա՝ Հոկտեմբերյան ռեյոլյուցիայի 40-ամյա տարեդարձին մասնակցելու համար: Ճապոնական Կոմպարտիայի Կենտկոմի նախագահության անդամ Իոսիո Սիգան ասաց. «Չնայած ռեակցիոն ուժերի կողմից հարուցվող բոլոր հնարավոր արգելքներին, բարեկամական կապերը Ճապոնիայի և Սովետական Միության միջև ամրապնդվում են և բնդլայնվում: Ճապոնական ժողովուրդը ավելի և ավելի է հասկանում, որ սոցիալիզմը — դա խաղաղություն է, ժողովրդի երջանկության, զիտության և արվեստի առաջընթաց»:

Բազմանշանակալից է կոմունիստական շարժման ծավալման դերը Մերձավոր ու Միջին Արևելքում, ուր փորձում է ամրանալ ամերիկյան իմպերիալիզմը: Կոմունիստներն այստեղ վճռականորեն մերկացնում են էյզենհաուեր-Դալլեսի

<sup>1</sup> «Պրավդա», № 313, 1957 թ. նոյեմբերի 9:

տխրահուշակ դոկտրինան, այսպես կոչված, «վակուումի» և այն ամերիկյան իմպերիալիզմով լցնելու վերաբերյալ: Նրանք պայքարում են արաբական ժողովուրդների ազգային ազատության ու անկախության, նրանց սոցիալական պրոգրեսի համար: Օտարերկրյա իմպերիալիստների դեմ միասնական ամուր ու լայն ճակատ ստեղծելու համար կոմունիստներն օգտագործում են ոչ միայն բանվորների ու շուրջապիսների ուժերը, այլև ազգային բուրժուազիայի: Այստեղ ցայտուն կերպով արտահայտվում է Լենինի ցուցումը, որ «ճշգրիտ ազգի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման և հենց այդ բովանդակությունն է, որ մենք անպայմանորեն պաշտպանում ենք»<sup>1</sup>:

Հատկապես եռանդուն գործունեություն է ծավալում Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական պարտիան, որի կենտկոմի ղլխավոր քարտուղարն է անվանի գործիչ Նալեգ Բեգդադը: Սիրիայի դեմ օտարերկրյա ազդեցիկ ձախողման գործում իր ավանդը մտցրեց նաև այդ պարտիան՝ համախմբելով ժողովրդական մասսաներին: Կոմունիստներն ակտիվ աշխատանք են տանում նաև Թուրքիայում, թեև գտնվում են ընդհատակում:

Որոշակի վերելք է ապրում կոմունիստական շարժումը աֆրիկյան երկրներում, հատկապես Ալժիրում, Մարոկկոյում, Թունիսում և այլն:

Խոր արմատներ ու լայն հեռանկարներ ունի կոմունիստական շարժումը ամերիկյան մայր ցամաքում, թեև այստեղ առկա են նաև լուրջ դժվարություններ: Այդ հատկապես ակնառու է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր օրեցօր ուժեղանում է միլիտարիզմն ու ոստիկանական ուժերը:

ԱՄՆ-ում կոմունիստական պարտիա գոյություն ունի 1919 թ., բայց նա անընդհատ ենթարկվել է հալածանքների, որոնք առանձնապես ուժեղացան ետպատերազմյան ժամանակաշրջանում: 1954 թ. օրենքով արգելվեց կոմպարտիայի գործունեությունը, նրա բազմաթիվ գործիչներ, այդ թվում նաև պարտիայի Ազգային կոմիտեի անդամներ Ջիլբերտ Գրինը, Հենրի Ուինստոնը, Բրվինգ Պոտաշը և ուրիշները, տառապում են ամերիկյան բանտերում: Այնուամենայնիվ, ռեակցիան անզոր է ընկճելու կոմունիստների արիությունն ու հաստատակամությունը: ԱՄՆ-ի կոմպարտիան անդուլ կերպով ուժեղացնում է իր աշխատանքը մասսաների մեջ:

1957 թ. փետրվարին Նյու-Յորքում տեղի ունեցավ պարտիայի 16-րդ Ազգային համագումարը, որն անցավ կոմպարտիայի շարքերի միասնության ամրապնդման և նրա գործունեության հետագա ակտիվացման նշանաբանով: Համագումարը վճռական հակահարված տվեց ռեպրեսիստական-իլիվիդատորական այն տեսակետին, թե պետք է ԱՄՆ-ի կոմպարտիան վերածել սոսկ «լուսավորչական կազմակերպության», «քաղաքական գործողությունների ասոցիացիայի»: Միաժամանակ համագումարի որոշումներում դատապարտվեց ամերիկյան իմպերիալիզմի ռազմատենչ, ազդեցիկ քաղաքականությունը, ռասայական դիսկրիմինացիան նեգրերի նկատմամբ: Պարտիայի Ազգային կոմիտեն համագումարի արդյունքների մասին հատուկ նամակ ուղարկեց պարտիայի բոլոր անդամներին և կոչ արեց վճռական պայքար մղել ֆրակցիոն

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 513:

խմբավորումների դեմ, ուժեղացնել կապը ժողովրդական մասսաների հետ, լինել նրանց ավանգարդում:

ԱՄՆ-ի Կոմպարտիայի պատվավոր նախագահ Ուիլյամ Ֆոստերը արդարացիորեն մատնանշեց, որ այդ համագումարը վերացրեց պարտիայի մեջ առաջացած ճգնաժամը և նոր լիցք հաղորդեց նրա գործունեությանը: Այնուհետև կանգ առնելով հետագա հեռանկարների վրա նա գրում է. «ԱՄՆ-ում Կոմունիստական պարտիայի պահպանման և հետագա աճման համար վերջին հաշվով վճռական նշանակություն ունեն երկու գործոն: Առաջինն այն է, որ ամերիկյան բանվոր դասակարգի առաջ կանգնած է դասակարգային պայքարի ուժեղացման պատմական հեռանկարը, որովհետև ամերիկյան իմպերիալիզմը, թեև նա հարուստ է և ուժեղ, այնուամենայնիվ երաշխավորված չէ համաշխարհային կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի քայքայող ազդեցությունից: Երկրորդ գործոնը, որը պետք է նպաստի մարքսիզմ-լենինիզմի ազդեցության աճին ԱՄՆ-ում, հանդիսանում է... այդ թեորիայի բազմիցս հաստատված գերազանցությունը բոլոր ուրիշ թեորիաների նկատմամբ դասակարգային պայքարի դեկավարման գործում: Մարքսիզմ-լենինիզմը, որը ստեղծագործորեն կիրառվում է տարբեր երկրների առանձնահատուկ պայմաններում, ունի ունիվերսալ նշանակություն: Միացյալ Նահանգները և ոչ մի չափով բացառություն չեն կազմում»<sup>1</sup>:

Վերջին ժամանակները այժմ օպորտունիստական, լիկվիդատորական տրամադրություններ առաջացան նաև Կանադայի Բանվորական պրոգրեսիվ պարտիայի ներսում: Որոշ վաղ-կոմունիստներ պահանջում էին բանվորական-կոմունիստական պարտիան փոխարինել անձև «նոր սոցիալիստական միավորում»<sup>2</sup>: Պարտիայի 6-րդ համագումարը (1957) խստորեն դատապարտեց այդ ֆրակցիոն ու վնասակար ելույթը և իր ընդունած բանաձևում ընդգծեց, որ Կանադայի Բանվորական պրոգրեսիվ պարտիան մարքսիստական-լենինյան պարտիա է ու կոչված է հետևողականորեն պաշտպանելու բանվորների, կանադական ժողովրդի շահերը:

Կոմունիստական շարժումը լայն թափ է ստացել Լատինական Ամերիկայի երկրներում, ուր կոմունիստների թիվը հասնում է ավելի քան 200 հազարի: Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի, Չիլիի կոմունիստական պարտիաները, Կուբայի ժողովրդական սոցիալիստական պարտիան գլխավորում են իրենց ժողովուրդների հակաիմպերիալիստական շարժումն ու դասակարգային պայքարը: Արգենտինայի Կոմպարտիայի Կենտկոմի քարտուղար Վիկտորիո Կոզեիլը մատնանշում է, որ «լենինիզմը ավելի ու ավելի վառ կերպով է լուսավորում Լատինական Ամերիկայի ժողովուրդների ուղին նրանց պայքարում՝ հանուն իրենց ազգային և սոցիալական ազատագրության: Այդ պատճառով էլ նրանց հաղթանակը, ինչպես և բոլոր մնացած գաղութային ու կախյալ ժողովուրդների հաղթանակը, ապահովված է»<sup>3</sup>:

Այսպիսով, համաշխարհային կոմունիստական շարժումն աճում է խորությամբ ու լայնությամբ և ընդգրկել է երկրազնդի բոլոր ժողովուրդներին: Այդ շարժումը մեծագույն հաղթանակներ է տարել կապիտալիզմի դեմ մղվող պայ-

<sup>1</sup> Տե՛ս Ուիլյամ Ֆոստերի «Նոկոմունիստական օկոլոցիան և ԱՄՆ-ի բանվոր դասակարգը» հոդվածը, տպագրված «Կոմունիստ» ամսագրի 1957, № 15-ում, էջ 73:

<sup>2</sup> «Պրավդա», № 313, 1957 թ. նոյեմբերի 9:

քարում, կենդանի մարմնացում գտել սոցիալիզմի հզոր լազերի մեջ: Միաժամանակ այն դարձել է կապիտալիստական աշխարհի բոլոր աշխատավորների իղձերի ու խոհերի տիրակալը: Կարճ ասած՝ կոմունիզմը համաշխարհային մասսայական շարժում է և հետևապես արդիականության հզոր պրոգրեսիվ ուժը: Ուստի նա վճռական դեր է կատարում մարդկության հասարակության զարգացման գործում, աշխարհի ժողովուրդների կյանքում:

\* \* \*

Կոմունիստական շարժման աճն ու անհաղթահարելիությունը է՛լ ավելի է սրում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը, իսկ բուրժուական ագրեսիվ պետությունները փորձում են նեղ դրությունից դուրս դալ նոր պատերազմի հրահրմամբ: Դրա մի նոր վկայությունն է ՆԱՏՕ-ի Խորհրդի 1957 թ. դեկտեմբերյան սեսիան, որը պահանջեց ուժեղացնել սպառազինությունների մրցավազը: Մինչև այժմ շտեմնված ավերիչ պատերազմի սպառնալիքի պայմաններում բացառիկ կարևոր նշանակություն է ստանում խաղաղության պաշտպանության գործը, կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների մոսկովյան խորհրդակցությունները ընդգծեցին, որ ներկայումս ամբողջ աշխարհում կարևորագույն խնդիրը պայքարն է խաղաղության պաշտպանության համար:

Խաղաղության պաշտպանության հզոր պատվարն է սոցիալիզմի լազերը՝ Սովետական Միության զխավորությամբ: Խաղաղության դիրքերում են կանգնած գաղութային ճնշումից սզատագրված ժողովուրդները և աշխարհի բոլոր ազատասեր ժողովուրդները: Խաղաղության կողմնակիցների հզոր շարժումն ընդգրկել է ամբողջ աշխարհը:

Բայց քանի որ դեռ առկա է իմպերիալիզմի լազերը, որն ամեն կերպ հրահրում է պատերազմը, պետք է աշխույժ լինել և հակահարված տալ նրա ագրեսիվ ոտնձգություններին: Խաղաղության պաշտպանման համար ժողովուրդների ուժերի մոբիլիզացման գործում առաջնակարգ դեր են կատարում կոմունիստական ու բանվորական պարտիաները: Նրանք իրենց առօրյա գործունեությամբ ու ընդհանուր նպատակներով դեմ են պատերազմներին և ձգտում են կայուն խաղաղության: Ահա թե ինչու Խաղաղության մանիֆեստում ասված է. «Կոմունիստների նպատակը այնպիսի հասարակարգի կառուցումն է, որտեղ ապահովված կլինի ընդհանուր բարեկամություն, բոլոր ժողովուրդների բարգավաճում, ազգերի միջև հավերժական խաղաղություն: Սոցիալիստական երկրներին մշտական խաղաղություն է հարկավոր այդ հասարակարգը կառուցելու համար: Ուստի շկան պատերազմի ավելի հետևողական թշնամիներ, խաղաղության ավելի կայուն մարտիկներ, քան կոմունիստները»:

Կոմունիստական շարժումը ամենից ունյուցիոն, առաջադիմական, հումանիստական շարժումն է ամբողջ աշխարհում, ուստի նա ժողովրդական շարժում է, անհաղթահարելի ու վերընթաց մի հզոր շարժում, որը մղվում է սոցիալիզմի, դեմոկրատիայի ու խաղաղության համար: Մեր դարաշրջանում այդ շարժամբ է որոշվում մարդկության զարգացման առաջընթացը և ապագան լիովին պատկանում է նրան: